ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 169- Ա **03 հունիսի 2015 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22 կետերի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի

որոշում եմ՝

1. Ս.թ. հունիսի 18-ին անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում կիսավեր շենքում» թեմայով:

2. Ուսումավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Էդիկ Գալստյանին:

3. Հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նմանակողների խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Ոսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար վարչության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը.

2) ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի բաժնից 1 խումբ.

3) «Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ-ից 1 բժշկական բրիգադ.

4) «Հայ-Ռուսգազարդ» ՓԲԸ Մարտունու և Վարդենիսի տեղամասի վթարավերականգնողական 1 խումբ:

5. Ուսումնավարժության ղեկավար Էդիկ Գալստյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) կազմակերպել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

4) կազմակերպել փոխգործողության պլանների ճշգրտումը.

5) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում տեղական լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ս.թ. թվականի հունիսի 15-ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները,

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին,

4) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. հունիսի 3-ի
N 169-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ փոխգնդապետ Հ.Աբրահամյան	մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
2	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ	փ/ծ կապիտան Վ. Գորոյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ
	գործնական միջոցառումների կազմակերպման խումբ		
3	խմբի պետ	փ/ծ մայոր Գ. Հակոբյան	Գեղարքունիքի ՄՓՎ պետի տեղակալ , բնակչության պաշտպանության բաժնի պետ
4	խմբի անդամ	փ/ծ մայոր Ա. Առաքելյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
5	խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Ա. Սիմոնյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ
6	խմբի անդամ	փ/ծ մայոր Մ. Փոստոյան.	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար
7	խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Ա. Պետրոսյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. հունիսի 3-ի
N 169-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՄԱՆԱԿՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ

ՀՀ	Պաշտոնը ուսումնավարժությունում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	խմբի պետ	փ/ծ ավագ Գալստյան Տիգրան	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 ՀՓՋ հերթափոխի պետ
2	խմբի անդամ	փ/ծ ավագ սերժանտ Ժամհարյան Սասուն	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 ՀՓՋ օղակի հրամանատար
3	խմբի անդամ	փ/ծ ավագ սերժանտ Վարդանյան Վանիկ	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 ՀՓՋ ավագ հրշեջ
4	խմբի անդամ	փ/ծ շարքային Երիցյան Սեմյոն	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 ՀՓՋ հրշեջ
5	խմբի անդամ	փ/ծ ավագ սերժանտ Հակոբյան Բաբկեն	Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 35 ՀՓՋ հրշեջ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. հունիսի 3 -ի
N 169-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՀՀ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշ.կատարման մասին
	Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ վայր, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 03.06	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
2.	ՀՏՈՒ մտահղացման մշակում	Մինչև 04.06	Ղեկավարման շտաբի պետ	
3.	ՀՏՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 05.06	Ղեկավարման շտաբի պետ	
4.	ՀՏՈ փաստաթղթերի հաստատում	Մինչև 9.06	Ղեկավարման շտաբի պետ	
	Ղեկավար կազմի նախապատրաստում			
5.	ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ծանոթացում մասնակիցներին	Մինչև 10.06	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
7.	Մասնակիցների հետ պարապմունքի անցկացում «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում փլուզված շենքում» թեմայով	05.06 12.06	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսուցանվողների նախապատրաստումը			
7.	Վարդենիսի թիվ 35 ՀՓՋ օղակների հրամանատարների հետ վարժանքի անցկացում «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական	15.06	Վարդենիսի թիվ 35 ՀՓՋ հրամանատար	

	աշխատանքների իրականացում փլուզված շենքում» թեմայով			
8.	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում և ստուգարքի ընդունում	Մինչև 16.06	Վարդենիսի թիվ 35 ՀՓՋ հրամանատար	
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
9.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև03.06	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
10.	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև17.06	Ղեկավարման շտաբի պետ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՂԵՓՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ